ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԵՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ , ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 1

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան
Երկու հազար տասնչորս թվականի ապրիլի յոթին 07.04.2014թ.

Մենք՝ մի կողմից ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի համայնքն՝ ի դեմս Աբովյանի քաղաքապետ Կարապետ Գուլոյանի, /որը գործում է կանոնադրության հիման վրա, իրավաբանական հասցեն՝ ՀՀ Կոտայքի մարզ քաղաք Աբովյան Բարեկամության - 1 / այսուհետ՝ « Կողմ-1 » ,

և մյուս կողմից Հայաստանի Հանրապետության ԿԱ պետական եկամուտների կոմիտեն՝ ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գևորգյանի, /որը գործում է կանոնադրության հիման վրա, իրավաբանական հասցեն՝ 0015 Երևան ,Մ.Խորենացու 3 / , այսուհետ՝ «Կողմ-2», որի անունից երկու հազար տասնչորս թվականի ապրիլի երեքին տրված թիվ 3907/18 լիազորագրով/լիազորագիրը տես գործում/, հանդես է գալիս ՀՀ ԿԱ ՊԵԿ Կոտայքի ՏՀՏ պետի տեղակալ , լիազորված անձ՝ Անդրանիկ Մամվելի Քոչարյանը, ծնված՝26 ապրիլի 1971թ., հաշվառված՝ ՀՀ Աբովյան քաղաքի Ռոսիայի փողոցի 14/տասնչորս/ շենքի թիվ 54/հիսունչորս/ բնակարանում.

Հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքային համայնքի 28 փետրվարի 2012թ. թիվ 11-Ա , 28 մարտի 2014թ. թիվ 22-Ա ավագանու որոշումները և ՀՀ Կոտայքի մարզի Աբովյանի քաղաքապետի 01 ապրիլի 2014թ. թիվ 509 գրությունը , կնքեցինք սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Երկկողմ փոխադարձ համաձայնությամբ և հիմք ընդունելով ՀՀ քաղ. օր.-ի 466 հոդվածը , կողմերը որոշեցին կատարել կետերի փոփոխություններ, լրացումներ և ավելացումներ՝ 24.12.2009թ. ՀՀ Կոտայք նոտարական տարածքի նոտար՝ Նունե Մանուչարյանի կողմից թիվ 5764 գրանցմամբ վավերացված Անշարժ գույքի մասի վարձակալության պայմանագրում.

ա/ 1. Պայմանագրի առարկան բաժնի 1.1. ենթակետում ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Բարեկամության հրապարակի թիվ 1 հասցեում գտնվող քաղաքապետարանի շենքից 848,65քմ./ութ հարյուր քառասունութ ամբողջ վաթսունհինգ/ քմ. մակերեսով վարձակալությամբ տրված տարածքի մակերեսի փոփոխություն/ ընդ որում առաջին հարկից 415,4քմ. /չորս հարյուր տասնհինգ ամբողջ չորս/ քմ. մակերեսով վարձակալությամբ տրված տարածքին ավելացնել 103,64/մեկ հարյուր երեք ամբողջ վաթսունչորս / քմ. մակերես և 1-ին հարկից վարձակալության տրված տարածքի նոր մակերես կարդալ՝ 519,04քմ./հինգ հարյուր տասնինը ամբողջ զրո չորս / քմ. մակերես/ նոր մակերես կարդալ՝ 952,29 /ինը հարյուր հիսուներկու ամբողջ քսանինը/քմ. մակերես/ *որի նկարագիրը տրված է սենեկանության վկայականի շենքի հատակագծում, վարձով տրվող տարածք նշումով, գծապատված կարմիրով / այսուհետ գույք/, հատակագիծը կցվում է համաձայնագրին և համարվում սույն համաձայնագրի անբաժանելի մասը/.*

բ/ 3. Պայմանագրի ժամկետը և հաշվարկները բաժնի 3.2 կետի փոփոխություն՝ նոր տարեկան վարձավճար կարդալ՝ 2 855 000 /երկու միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար/ ՀՀ դրամ գումար:

գ/ 3. Պայմանագրի ժամկետը և հաշվարկները բաժնի 3.1.կետում կատարել լրացում, Հաջորդ տարիների մասով *պայմանագիրը ուժի մեջ կմտնի համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո*, որի մասին կողմերի միջև կկնքվի լրացուցիչ համաձայնագրեր:

2. Պայմանագրում ավելացնել հետևյալ կետերը.

ա/ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում վարձատուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի վարձավճարի նկատմամբ 0,5 տոկոսի չափով:

բ/ Սույն պայմանագրով նախատեսված տարածքի հանձնման ժամկետի խախտման համար վարձատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացած օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չկատարված մասի գումարի 0,05 տոկոսի չափով:

գ/ Պայմանագրով նախատեսված վարձատուի նկատմամբ հաշվարկված տույժերը,տուգանքները հաշվարկվում են և հաշվանցվում են վարձատուի վճարման ենթակա գումարից:

դ/ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ե/Ոչ ուշ, քան 3/երեք/ ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել վարձակալված Գույքի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ.

3. *ՀՀ Քաղ. օր.-ի 441 հոդվածի համաձայն՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ, սույն համաձայնագրով նախատեսված վերը նշված պայմանագրում կատարվող փոփոխությունների պայմանները կիրառվում են սկսած՝ 01.01.2014թ.-ից:*

4. Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Կոտայք տարածքային ստորաբաժանման կողմից 25 փետրվարի 2014թ. տրված թիվ ՍՏ-25022014-07-0028 միասնական տեղեկանքի գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ չկան և գույքը ծանրաբեռնված է անհատույց օգտագործման և վարձակալության իրավունքներով:

5. Անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայական թիվ 0126661, տրված՝ 25 հունվարի 2010թ. ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Աբովյանի տարածքային ստորաբաժանման կողմից :

6. Պայմանագրի մնացած բոլոր կետերը մնում են անփոփոխ:

7. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում վավերացման պահից:

8. Համաձայնագիրը ենթակա է գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

9. Սույն համաձայնագիրը վավերացված է հայերեն լեզվով, կողմերի ցանկությամբ 3 /երեք/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի մեկ օրինակը պահվում է նոտարի գործերում, իսկ մյուս օրինակները տրվում են կողմերին:

10. Նոտարի կողմից համաձայնագրը բարձրաձայն ընթերցվեց կողմերի համար և պարզաբանվեցին գործող օրենքի նորմերը :

Կ Ո Ղ Մ-1

ՀՀ Աբովյանի քաղաքապետ Կարապետ Գուլոյան

Կ Ո Ղ Մ - 2

Հայաստանի Հանրապետության ԿԱ պետական եկամուտների կոմիտեն՝ ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ Ա.Գևորգյանի

լիազորված անձ՝ Անդրանիկ Սամվելի Քոչարյան
անձնագիր սերիաAN0460132, տրված՝02.05.2013թ., 019

հաշվառված՝ ՀՀ Աբովյան քաղաքի Ռուսիայի փողոցի 14/տասնչորս/ շենքի թիվ 54/հիսունչորս/ բնակարանում

«Յոթը» ապրիլի երկու հազար տասնչորս թվականին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Կոտայք նոտարական տարածքի նոտար Ռիմա Սխիթարյանի կողմից: Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պարզված է համաձայնագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը, նրանց ներկայացուցչների լիազորությունները՝ստուգված:

1250

Գրանցված է սեղանամատյանում
«Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին»
ՀՀ օրենքներով նախատեսված գանձված է պետական տուրք և
ծառայության վճար:



Հատակագծի նմանություն /Հ





I РШП
H = 3.20
h = 3.00

12